

**<<1000 դրամների օրենք>>, թե՞ նոր ձևաչափով թալան:**

2016 թվականի դեկտեմբերի 15-ին ԱԺ-ն ամբողջությամբ ընդունեց «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցման մասին» օրենքը (այսուհետ՝ Օրենք):

Չնայած նրան, որ ընդդիմադիր պատգամավորներն անընդհատ պնդում էին, որ բացակա պատգամավորների փոխարեն քվեարկություն է իրականացվում, պահանջում էին վերականգնել քվեարկությունների պատկերը՝ ակնառու տեսնելու, որ բացակայողների տեղերում <<կողմ>> կոճակի կանաչ լույսերն են վառվել, ԱԺ նախագահն այդպես էլ չիրականացրեց կանոնակարգ-օրենքով նախատեսված պատգամավորների պահանջը:

Այսպիսով, առանց հանրային կարծիքը հաշվի առնելու, մեծ շտապողականությամբ, օրենքն ընդունվեց և արդեն հունվարի աշխատավարձերից հազարավոր քաղաքացիներից զանձվեց 1000-ական դրամները՝ խնդրի առաջ կանգնեցնելով ինչպես աշխատողներին, այնպես էլ գործատուներին:

**Օրենքում կան թերի ու հակասական կողմեր, բացի այդ, այն կարելի է գնահատել հակասահմանադրական հետևյալ հիմնավորումներով.**

1. Օրենքի ուժով, 1000-ական դրամները զանձվում են աշխատողների աշխատավարձերից: Իսկ ի՞նչ է աշխատավարձը, միթե դա անձի սեփականությունը չէ՞, նշանակում է կամքին հակառակ, պարտադիր աշխատավարձի պահումն ոտնձգություն է անձի սեփականության նկատմամբ:

**Համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի 178 հոդվածի,** աշխատավարձը օրենքով, իրավական այլ ակտերով սահմանված կամ աշխատանքային պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարելու դիմաց աշխատողին վճարվող հատուցումն է:

**Համաձայն ՀՀ Սահմանադրության 60 հոդվածի,** յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

**Համաձայն Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 17 հոդվածի,** ոչ ոք չպետք է կամայականորեն զրկվի իր սեփականությունից:

Ստացվում է, որ աշխատողից պարտադիր 1000 դրամ գումար աշխատավարձից պահելով, խախտվում է անձի սեփականության իրավունքը, քանի որ միայն սեփականատերն է իրավասու տնօրինել իր գումարը:

2. **Օրենքի 11 հոդվածի 3-րդ** մասում նշվում է, որ 1000 դրամները չեն վճարում այն անձինք, որոնք աշխատում են միայն մեկ աշխատանքային պայմանագրով և ստանում են նվազագույն աշխատավարձ: Նրանց փոխարեն վճարում է կամ գործատուն՝ սեփական գրպանից, կամ պետական բյուջեից, կամ համայնքի բյուջեից:

Սակայն, այստեղ պարզ չէ, թե խոսքը միայն հաստիքային աշխատողների՞ն է վերաբերում, թե՞ նաև ժամային ու գործարքային պայմանագրով աշխատողներին: Նվազագույն ամսական աշխատավարձի մասին ՀՀ օրենքում հստակ նշվում է թե որն է համարվում նվազագույն ամսական աշխատավարձն՝ այն սահմանելով 55000 դրամը, իսկ

նույն օրենքի 2-րդ հոդվածով տալիս է գործավարձով և ժամավճարով վարձատրվող աշխատակիցների համար ժամային տարիֆային դրույքի նվազագույն չափը՝ 330-550 դրամ:

**Եթե հաստիքային աշխատողի դեպքում օրենքի սահմանումը պարզ է, ապա ժամային և գործարքային պայմանագրով աշխատողի պարագայում, հակասություններ են առաջանում և ենթակա է հստակեցման:**

**3. Օրենքի 11 հոդվածի 3-րդ մասը** հակասահմանադրական է նաև նրանով, որ միայն մեկ աշխատանքային պայմանագրով աշխատող և նվազագույն աշխատավարձ ստացող աշխատողին է ազատում 1000 դրամ գումարը վճարելու պարտավորությունից: Մտացվում է, որ եթե անձն աշխատում է 2 և ավելի աշխատանքային պայմանագրերով (համատեղությամբ) և ստանում է նվազագույն աշխատավարձ (մեկ կամ բոլոր պայմանագրերով), ապա 1000 դրամը պարտադիր կերպով պահվում է նրա նվազագույն աշխատավարձից կամ աշխատավարձերից:

Այս պայմաններում, խախտվում է մարդու՝ Մահմանադրությամբ ամրագրված նվազագույն աշխատավարձ ստանալու իրավունքը /Մահմանադրության 84 հոդված/, ինչպես նաև Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով սահմանված իրավունքը / 23 հոդված/, քանի որ աշխատողը ստանում է նվազագույնից էլ ցածր աշխատավարձ:

**4.** Քաղաքացիաիրավական պայմանագրով եկամուտ ստացողների դեպքում գործում է անհավասարության սկզբունքը, քանի որ, օրինակ, մեկ ամսում 5000 դրամ եկամուտ ստացողը նույնպես պարտադիր կերպով վճարում է 1000 դրամը, էլ չենք խոսում ընդամենը 1000 դրամ եկամուտ ստացողի մասին, ով փաստորեն առձեռն այդպես էլ եկամուտ չի ստանում:

**5.** Հաջորդ հարցը, որը նույնպես դեռ կարգավորում չի ստացել, այն է, թե ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտները հանդիսանում են դրոշմանիշային վճար վճարողներ:

Ընտանիքի անդամ հանդիսացող աշխատողի մասով պարզ է, որ եկամուտ է ստանում աշխատավարձի տեսքով և վճարելու է 1.000 դրամը, իսկ անհատ ձեռնարկատիրոջ մասով թերի է: Օրինակ, ԱԶ ընտանեկան ձեռնարկատերը իր համար կուտակային/նպատակային սոցիալական վճար չի վճարում:

Եթե նայենք «Ընտանեկան ձեռնարկատիրության հարկման որոշ հարցերի վերաբերյալ» 23-ր հունվարի 2015թ N 3 պաշտոնական պարզաբանման 7 կետը, ապա նույն անալոգիայով նաև ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ ԱԶ-ն այդ տարեկան 12000 դրամը չպիտի վճարի:

Մեջբերում պարզաբանումից՝ բացառապես ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ համարվող անհատ ձեռնարկատիրոջ համար «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն սոցիալական վճարի հաշվարկման օբյեկտի («Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն ստացման ենթակա տարեկան հարկվող եկամուտ) բացակայությամբ պայմանավորված ընտանեկան ձեռնարկատիրության մասով չի առաջանում նաև սոցիալական վճարի կատարման և տարեկան եկամուտների մասին պարզեցված հաշվարկ ներկայացնելու պարտավորություն:

**6.** Եթե նվազագույն աշխատավարձ ստացողների պարագայում 1000 դրամը վճարում է գործատուն (ըստ օրենքի՝ աշխատողների թիվը բազմապատկված 1000 դրամով) և այն չի հարկվում, ապա մյուսների դեպքում 1000 դրամը, մտնելով համախառն եկամտի մեջ,

հարկվում է, և ստացվում է ոչ թե անձից 1000 դրամ է պահվում այլ, ավելի՝ 24.4 տոկոսի հարկման դեպքում + 244 դրամ, իսկ 26 տոկոսի դեպքում + 260 ՀՀ դրամ:

Իրավաբանիս կողմից թվով 3 բյուջետային հիմնարկներում (ՊՈԱԿ) ուսումնասիրություն և բանավոր հարցում անելու արդյունքում պարզվեց, որ վերադասից (նախարարություն) ներքին հրահանգ է եղել բոլոր նվազագույն աշխատավարձ ստացող աշխատողների աշխատավարձերը պարտադիր կարգով ավելացնել (որն էլ ավելացվում է ի հաշիվ հիմնարկի այլ եկամուտների), որպեսզի 1000 դրամի պահումը կատարվի աշխատողի աշխատավարձից և ոչ թե պետական բյուջեից, բացի այդ, վերոնշյալ կարգով էլ այն կհարկվի համախառն եկամտի մեջ և խաբեությամբ պետբյուջեն ավել գումար կլցվի:

**7. Համաձայն Օրենքի 12 հոդվածի 2 և 3 կետերի, եթե քաղաքացին աշխատում է, մի քանի գործատուի մոտ, բոլորի դեպքում էլ գանձվում է ամսական 1000 դրամ, ինչպես նաև եթե նաև ԱԶ է, նույնպես գանձվում է:**

Օրենքը սահմանում է, որ տարվա վերջում նա պետք է տեղեկանք ներկայացնի, որ իրենից մեկ անգամից ավելի գանձված մասը հետ վերադարձվի:

Մինչև նախագծի վերջին ընթերցումը, այս հարցը կարգավորված էր. մի գործատուից, ով պահում է գումարը, տեղեկանք էս վերցնում ու տալիս մյուս քո գործատուներին, որ նրանք այդ գումարը չգանձեն, իսկ նախագծի վերջին ընթերցմամբ դա փոխվեց:

Դրանով աշխատակիցը նախ հնարավորություն չի ստանում տարվա ընթացքում կառավարել իր գումարը և երկրորդ՝ հետ ստանալու գործընթացը լրացուցիչ ժամանակ է իրենից խլելու: Ինչու՞ աշխատակիցը չի կարող տարվա սկզբում նախապես ներկայացնել իր փաստաթղթերը, որպեսզի միայն մեկ դեպքում գանձվի այդ գումարը: Կամ օրենքում հստակ նշում արվի, որ պահումը կատարվի հիմնական աշխատավայրից:

**8. Պետք է խոսել նաև այն մտավախության մասին, որ այս օրենքը հապճեպ ուժի մեջ մտցնելով և պարտադիր բաղադրիչը կիրառելով, իշխանությունը հասկացնել է տալիս, որ սպասվում է պատերազմ և/կամ ունենալու ենք զոհեր, քանի որ, օրենքը հետադարձ ուժ չունի և չի տարածվում 2016թ-ի ապրիլյան պատերազմի զոհերի ընտանիքիների վրա:**

*Վերոգրյալից կարելի է հետևություն անել, որ Օրենքի հիմնական նպատակը ոչ թե պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցումն ապահովող հատուկ համակարգի ներդրումն է, այլ աշխատավոր քաղաքացիներից լրացուցիչ գումարներ կորզելու օրինական հիմքերի ստեղծումը:*

Վանուհի Գասպարյան,

Ա.Գ.Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոնի Շիրակի տարածաշրջանային մասնաճյուղի իրավաբան